ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԵՂԵԿԱՆՔ

2024 թվականին Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ

ԶԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում

2025

Տեղեկանքը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Տեղեկանքում ներկայացված կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են և հնարավոր է չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Կազմեց՝ Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Շապիկի լուսանկարի աղբյուրը «Ֆոտոլուր» լրատվական գործակալությունն է

Նկարագրություն՝ ոստիկանության ծառայողների կողմից 2024 թ. հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում ցուցարների նկատմամբ կիրառված Զարյա տեսակի հատուկ միջոցը պայթել է

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

ԲԱԺԻՆ 1. 2024 Թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

1.1. 2024 թ. Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած անհատական բնույթի դեպքերի ամփոփում 11

1.2. 2024 թ. հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցելու հետևանքով Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերի ամփոփում 12

ԲԱԺԻՆ 2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2020-2024 ԹԹ. 13

2.1. Բողոքի ցույցների մասնակիցների իրավունքների խախտումները 14

2.2. Խոշտանգման, մարդկային արժանապատվությունը նվաստացնող դեպքերը 15

2.3. Պատգամավորների նկատմամբ ոչ իրավաչափ գործողությունները 16

2.4. Լրագրողների նկատմամբ ոչ իրավաչափ գործողությունները 17

2.5. Ոչ ծառայողական հագուստով անձանց և քաղաքացիական ավտոմեքենաների ներգրավումը 17

2.6. Հատուկ միջոցի կիրառումը 18

2.7. Իշխանության ներկայացուցիչների արձագանքը ոստիկանության գործողություններին 19

ԲԱԺԻՆ 3. 2024 Թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 20

3.1. Բողոքի ցույցների ժամանակ ոստիկանության գործողությունները 2024 թ. ապրիլի 19-ից հունիսի 12-ն ընկած ժամանակահատվածում 20

3.1.1. Ապրիլի 19-մայիսի 4 20

3.1.2. Մայիսի 9-մայիսի 25 22

3.1.3. Մայիսի 26-հունիսի 8 23

3.2. Հատուկ միջոցի կիրառումը հունիսի 12-ի բողոքի ցույցերի ժամանակ 24

3.3. Ոստիկանության գործողությունները ՁԼՄ ներկայացուցիչների նկատմամբ 27

3.4. Ոստիկանության անգործությունը 29

3.5. Հաշվետվողականության և անպատժելիության մթնոլորտի հաղթահարման հետ կապված խնդիրները 30

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 32

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 33

Հավելված 1. ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պատասխանն առ հոկտեմբերի 25, 2024 թ. 34

Հավելված 2. ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պատասխանն առ դեկտեմբերի 6, 2024 թ. 36

Հավելված 3. ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պատասխանն առ հոկտեմբերի 23, 2024 թ. 37

Հավելված 4. ՀՀ գլխավոր դատախազության պատասխանն առ հոկտեմբերի 28, 2024 թ. 38

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2024 թ. ապրիլի 16-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ոստիկանության 106-րդ տարեդարձին նվիրված կոլեգիայի հանդիսավոր նիստին հայտարարեց, որ

«Ոստիկանությունը մեկն է այն կառույցներից, բայց հիմնականը, որն ընդունված է անվանել ուժային կառույց: Բայց սա չի նշանակում, որ ուժը Ոստիկանության առաջնային գործիքն է: Ոչ, ***ուժը Ոստիկանության ամենավերջին գործիքն է****:*

Եվ իհարկե, Ոստիկանության առաջնային նպատակը պետք է լինի ամեն ինչ անել, բոլոր հնարավոր և անհնար միջոցները ձեռնարկել, որպեսզի ***ուժ կիրառելու անհրաժեշտություն չլինի****»:*

Երեք օր անց սկսված բողոքի ակցիաները, որոնք հանգուցալուծվեցին հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում ոստիկանության կողմից ցուցարների նկատմամբ օրենքով արգելված հատուկ միջոցի կիրառմամբ փաստեցին սույն հայտարարության և իրականության անհամապատասխանությունը:

Մասնավորապես՝ 2024 թ. ապրիլի 19-ին ՀՀ իշխանությունը հայտարարեց Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանազատման գործընթացի մեկնարկի մասին, որը նախատեսվում էր սկսել հյուսիսից՝ Տավուշի մարզից: Սահմանազատմանը զուգահեռ բողոքի ցույցեր սկսվեցին՝ գործընթացը կասեցնելու պահանջով: Հընթացս ցույցերին միացան կուսակցությունների ներկայացուցիչներ, հանրային դեմքեր և ձևավորվեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը: Շարժումն առաջնորդեցին Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Տեր Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը, Ազգային ժողովի (ԱԺ) պատգամավոր Գառնիկ Դանիելյանը և քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը:

Բողոքի ցույցերը մեկնարկեցին Կիրանցում 2024 թ. ապրիլի 19-ին և մինչև մայիսի 4-ը տեղի ունեցան հիմնականում Տավուշի մարզում: Այնուհետև շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը հայտարարեց աջակիցների հետ դեպի Երևան քայլերթ սկսելու մասին: Մայիսի 9-ից հավաքներ և բողոքի ցույցեր իրականացվեցին Երևանում՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով: Մասնավորապես առավոտյան բողոքի ցույցեր էին մայրաքաղաքի տարբեր փողոցների երթևեկությունն արգելափակելու, ցերեկը՝ դեպի բարձրագույն ուսումնական հաստատություններ երթերի և իրազեկման արշավների, իսկ երեկոյան՝ Հանրապետության հրապարակում հանրահավաքի ձևով: Բողոքի ցույցերը շարունակվեցին մինչև հունիսի 12-ը, երբ Ոստիկանության կողմից Բաղրամյան պողոտայում ցուցարարների նկատմամբ կիրառվեց հատուկ միջոց՝ «Զարյա 3» տեսակի լուսաձայնային նռնակ, որն օրենքով արգելված էր օգտագործել մարդկանց դեմ:

Հատկանշական է, որ մայիսի 9-ին Հայաստանի ուժային կառույցները (Ազգային անվտանգության ծառայություն, Ոստիկանություն, Քննչական կոմիտե) հայտարարություններ տարածեցին՝ կոչ անելով ենթարկվել Ոստիկանության օրինական պահանջներին, ընդգծելով, որ հակաօրինական ցանկացած դրսևորում կարժանանա համապատասխան քրեաիրավական գնահատականի: Քննչական կոմիտեն հայտարարություններից մեկով նույնիսկ տեղեկացրեց, որ սահմանազատման դեմ ակցիաների ժամանակ արձանագրված դեպքերով 11 քրեական գործ են հարուցել, 9 քաղաքացու կալանավորել:

Տեղեկություններ տարածվեցին նաև առ այն, որ մարզպետները Հայաստանում ապաստանած արցախցիներին սպառնում են՝ մայիսի 9-ին Երևանում Բագրատ սրբազանի առաջնորդած երթին մասնակցելու դեպքում զրկել պետական աջակցությունից, իսկ պետական հիմնարկների աշխատողներին ազատել աշխատանքից:

Ուժային կառույցների հայտարարությունները մինչև բուն իրադարձությունները, ինչպես նաև սպառնալիքներն ու Ոստիկանության ծառայողների գործողությունները (սեփականության անհիմն բռնագանձումը, քաղաքացիական հագուստով անձանց ներգրավումը, հատուկ միջոցի կիրառումը) վախի մթնոլորտ ստեղծելու և դրանով քաղաքացիների՝ բողոքի ցույցերին մասնակցությունը խոչընդոտելու վարքագիծ է:

Սույն տեղեկանքը կազմված է երեք բաժնից: **Առաջին բաժնում** ներկայացված են խախտման դեպքերի վիճակագրական տվյալներ: **Երկրորդ բաժնում** 2024 թ. ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը ներկայացված են 2020-2023 թթ. ընթացքում արձանագրված խախտումների հետ համադրությամբ՝ ներկայացնելու, թե ինչպիսի ազդեցություն է ունենում անպատժելիության խրախուսումը ոստիկանության գործողությունների վրա: Սույն բաժնի դիտարկումները հիմնված են ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից պատրաստված Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ 2020-2023 թթ. տեղեկանքների վրա[1]: **Երրորդ բաժնում** ներկայացված են 2024 թ. ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը: Տեղեկանքը ամփոփվում է եզրակացությամբ և առաջարկություններով:

[1] Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը 2020 թ. , 2021թ. , 2022 թ. , 2023 թ. , Տեղեկանքներ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, հասանելի են հետևյալ հղումներով՝ https://hcav.am/police-report-2020/; https://hcav.am/police-report-2021/; https://hcav.am/hcav-am-20-02-2023/; https://hcav.am/police-report-2023/

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն տեղեկանքն ամփոփում է 2024 թ. Հայաստանում ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտումներն ինչպես հավաքների և հանրային այլ միջոցառումների ժամանակ, այնպես էլ անհատական դեպքերով: Խախտման նույն դեպքի վերաբերյալ մի քանի հրապարակումներ համադրվել են՝ որպես հավաստիության ճշգրտման մեթոդ:

Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել է 12 առցանց լրատվամիջոց, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջը և Մարդու իրավունքների պաշտպանի ֆեյսբուքյան էջը[2]:

Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները:

Արձանագրված դեպքերը բաժանվել են երկու պայմանական խմբի՝ հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում տեղի ունեցած դեպքեր և անհատական բնույթի դեպքեր: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ ցույց, նստացույց, երթ և այլն:

Տեղեկանքում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտում են համարվել ոչ միայն անհիմն և ապօրինի բերման ենթարկելու դեպքերը, այլև բոլոր այն դեպքերը, երբ անձը թեև օրենքով սահմանված կարգով է բերման ենթարկվել ոստիկանության բաժին, սակայն այնտեղ պահվել է սահմանված 3 ժամից ավել:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումները ներկայացված և դասակարգված են՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների ցանկը: Առանձին խախտում է դիտարկվում մասնագիտական խմբերի (սույն Տեղեկանքում լրագրողների) գործունեության խոչընդոտումը՝ ոստիկանության ծառայողների գործողությունների բովանդակությունը հնարավորինս հստակ փոխանցելու և տեսանելի դարձնելու նպատակով:

Սույն մեթոդաբանության արդյունավետությունն ապացուցվել է նաև արտակարգ և ռազմական դրությունների պայմաններում՝ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտումների ուսումնասիրության ժամանակ:

---

[2] Մշտադիտարկված լրատվամիջոցներն ու կայքերն են՝ www.aravot.am, www.armlur.am, www.azatutyun.am, www.1in.am, www.168.am, www.armtimes.am, www.hraparak.am, www.epress.am, www.news.am, www.hetq.am, www.a1plus.am, www.factor.am, www.police.am, https://www.facebook.com/profile.php?id=100069268237249

Հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը, ուղիղ եթերների հնարավորությունը՝ լրատվամիջոցների հրապարակումները ծառայում են հուսալի սկզբնաղբյուր և ոստիկանության գործողությունները հնարավորինս օբյեկտիվորեն գնահատելու արդյունավետ գործիք:

Այս դիտարկումը մեծապես վերաբերում է հավաքներին և այլ հանրային ակցիաներին: Նշենք սակայն, որ անհատական բնույթի դեպքերի դիտարկումը պակաս կարևոր չէ ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների հնարավոր խախտումները զսպելու և կանխարգելելու տեսանկյունից: Ըստ այդմ, չափազանց կարևոր է ՁԼՄ-ների դերակատարությունը նաև մարդու իրավունքների անհատական բնույթի դեպքերի լուսաբանման հարցում, ինչը կնպաստի հնարավոր չարաշահումները, խախտումները կանխելուն ու Հայաստանի քաղաքացիների ապահովվածության ու վստահության մակարդակը բարձրացնելուն:

ԲԱԺԻՆ 1. 2024 Թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2024 թ. ՁԼՄ-ների հրապարակումների հիման վրա արձանագրվեց ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման **155 դեպք**: 2023 թ. արձանագրվել էր խախտման **112 դեպք**: 2022 թ. ընթացքում դեպքերի թիվը **199** էր:

*2015 թ. արձանագրվել էր ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման **304 դեպք,** 2016 թ.՝ **338 դեպք**, 2017 թ.՝ **107 դեպք**, 2018 թ.՝ **181 դեպք**, 2019 թ.՝ **90 դեպք**, 2020 թ.՝ **192 դեպք**, 2021 թ.՝ **159 դեպք*** (տե՛ս Գծապատկեր 1).

Գծապատկեր 1. Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման ընդհանուր թիվը ըստ ՁԼՄ հրապարակումների դիտարկման արդյունքների 2015-2024 թթ.



2024 թ. արձանագրվեց հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման **131 դեպք** կամ ընդհանուր դեպքերի **84.5 %-ը** (*տե՛ս Գծապատկեր 2*):

2024 թ. ՁԼՄ-ներով արձանագրվեց անհատական բնույթի խախտման **24 դեպք** կամ ընդհանուր դեպքերի **15.5 %-ը** (*տե՛ս Գծապատկեր 2*).

Գծապատկեր 2. Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը (հավաքների կամ հավաքներին մասնակցելու արդյունքում արձանագրված իրավունքների խախտման դեպքեր, անհատական դեպքեր) 2015-2024 թթ.





2024 թ. ընթացքում խախտվեցին մարդու հետևյալ 12 իրավունքները (*տե՛ս Գծապատկեր 4*).*Գծապատկեր 4. 2024 թ. խախտված իրավունքները*



2024 թ. առավել մեծ թվով խախտվեց խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը (98 դեպք կամ ընդհանուր դեպքերի 63.2 %): Երկրորդ առավել հաճախ խախտված իրավունքը՝ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքն է: Այն խախտվեց 91 դեպքում (ընդհանուր դեպքերի 58.7 %): Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը խախտվեց 81 դեպքում

(ընդհանուր դեպքերի 52.3 %): Նախորդ տարիներին նշյալ իրավունքների խախտման դեպքերի թվերը ներկայացված են ստորև.

Աղյուսակ 1. ՀՀ ոստիկանության կողմից անձի ազատության և անձնական անձեռնմխելիության, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքների խախտման թվային տվյալները 2015-2024 թթ.

Տարե թիվ	Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք		Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք		Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	
	Դեպք	Տոկոս	Դեպք	Տոկոս	Դեպք	Տոկոս
2024 թ.	81	52.3	91	58.7	98	63.2
2023 թ.	65	58	57	51	55	48.2
2022 թ.	146	73.7	124	62.6	155	78.3
2021 թ.	85	53.5	68	42.8	83	52.2
2020 թ.	111	57.8	84	43.8	101	52.6
2019 թ.	44	48.8	41	45.5	29	32.2
2018 թ.	76	42	84	46.4	81	44.8
2017 թ.	16	15	62	49.1	17	44.8
2016 թ.	157	46.4	141	41.7	121	35.8
2015 թ.	70	23	37	12.2	96	31.6

Դեպքերի գերակշիռ մասը, ավանդաբար, գրանցվեց Երևանում (120 դեպք, ընդհանուր դեպքերի 77.4 %-ը) (*տե՛ս Գծապատկեր 5*).

Գծապատկեր 5. Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտումները Երևանում և մարզերում



1.1. 2024 թ. Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած անհատական բնույթի դեպքերի ամփոփում

2024 թ. ՁԼՄ հրապարակումներով արձանագրվեց ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 24 անհատական բնույթի դեպք, ինչը կազմում է ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումների ընդհանուր թվի **15.5 %-ը**: Մասնավորապես խախտվել են հետևյալ իրավունքները՝

- ֆիզիկական բռնությունից զերծ մնալու՝ 14 դեպք (**58.3 %**),
- անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու՝ 7 դեպք (29.2 %),
- ազատության և անձնական անձեռնմխելիության՝ 7 դեպք (29.2 %),
- ազատ տեղաշարժվելու՝ 6 դեպք (25 %),

Խախտվեցին նաև առողջության, խոսքի ազատության, կարծիքն ազատ արտահայտելու, սեփականության, իրավաբանական օգնություն ստանալու

իրավունքները: 3 դեպքում խոչընդոտվեց լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը:

Անհատական բնույթի 24 դեպքերից 17-ը (70.8 %-ը) տեղի են ունեցել քաղաք Երևանում, 3-ը՝ Տավուշի, երկուական դեպք՝ Կոտայքի և Արմավիրի մարզերում:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի առավել մանրամասն հասանելի են հետևյալ հղմամբ:

1.2. 2024 թ. հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցելու հետևանքով Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերի ամփոփում

2024 թ. հավաքների և բողոքի ցույցերի ընթացքում արձանագրվեց ոստիկանության գործողությունների հետևանքով մարդու իրավունքների խախտման 131 դեպք՝ ընդհանուր խախտումների թվի **84.5 %-ը**: Մասնավորապես խախտվեցին հետևյալ իրավունքները՝

- խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու՝ 98 դեպք (**74.8 %**),
- ֆիզիկական բռնությունից զերծ մնալու՝ 77 դեպք (58.8 %),
- անձի ազատության և անձնական անձեռնմխելիության՝ 74 դեպք (56.5 %),
- առողջության՝ 24 դեպք (18.3 %),

Խախտվեցին նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, խոսքի ազատության և կարծիքն ազատորեն արտահայտելու, տեղեկություն ստանալու, ազատ տեղաշարժվելու, սեփականության իրավունքները: 22 դեպքում խոչընդոտվեց լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը:

131 դեպքերից 103-ը (78.6 %-ը) գրանցվել են Երևանում, 16 դեպք Տավուշի, երեքական դեպք՝ Կոտայքի և Արագածոտնի, երկու դեպք՝ Շիրակի, մեկական դեպք՝ Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Վայոց Ձորի մարզերում:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի առավել մանրամասն հասանելի են հետևյալ հղմամբ:

ԲԱԺԻՆ 2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2020-2024 ԹԹ.

2022 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 98 հրապարակումներում արձանագրված խախտումների քննության ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցում ուղարկեց ՀՀ ներքին գործերի նախարարությանը (ՆԳՆ): Ի պատասխան ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունից 2022 թ. դեկտեմբերի 29-ին տրամադրվեց 26 հրապարակման վերաբերյալ տեղեկություն: Մյուս 72 հրապարակումների վերաբերյալ, ըստ վարչության պատասխանի, իրականացվում էին ուսումնասիրություններ՝ ծառայողական քննության հարցը լուծելու համար[3]: 2024 թ. դեկտեմբերի 6-ին, ի լրումն նախորդ գրությունների[4], տեղեկացրեցին, որ քաղաքացիների նկատմամբ բռնություն գործադրելու կամ հակաօրինական որևէ գործողություն կատարելու հանգամանքները չեն հաստատել ոչ ՆԳՆ-ում և ոչ ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթի նախաքննությամբ: Ըստ պատասխանի՝ չեն հայտնաբերվել նաև կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ:

Այսպիսով՝ ոստիկանության գործողությունները քննելու համար պահանջվեց մոտ 3 տարի և արդյունքում հարցման մեջ նշված 98 դեպքերից որևէ մեկով ոստիկանության գործողությունները չհամարվեցին հակաօրինական, միայն մեկ դեպքով ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվեց կարգապահական տույժ «Նկատողություն» ձևով: Ընդ որում, պատասխանում նշված է, որ ոստիկանության ծառայողի ոչ արհեստավարժ գործելու արդյունքում <u>տպավորություն է ստեղծվել</u>, որ ծառայողը կոպտորեն հրել է երիտասարդ աղջկան: Նշենք, որ խոսքը սույն <u>տեսանյութի</u> մասին է, որում հստակ երևում է, որ ոստիկանության ծառայողը ոչ միայն հրում է երիտասարդ աղջկան, այլև հետո հարվածում և քաշում է մազերից: Մնացած այնպիսի դեպքերով, ինչպիսիք են <u>քաղաքացու դեմքին ոտքով հարվածելը</u>, <u>դիմակավորված անձանց ներգրավումը բողոքի ցույցերին</u>, <u>Եռաբլուրում զոհված զինծառայողների հարազատների նկատմամբ բռնության և մարդկային արժանապատվությունը նվաստացնող գործողություններում</u>, ոչ միայն քրեորեն հետապնդելի, այլև կարգապահական խախտման բնույթի արարքներ չեն տեսել իրավասու գերատեսչությունները:

---

[3] ՀՀ Ներքին գործերի նախարարության ներքին անվտանգության վարչության պատասխանն ամբողջությամբ տե՛ս Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ 2022 թ. տեղեկանքում

[4] ՀՀ Ներքին գործերի նախարարության ներքին անվտանգության վարչության պատասխաններն ամբողջությամբ տե՛ս Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ 2023 թ. տեղեկանքում

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մեկնարկից՝ 2024 թ. սպրիլի 19-ից մինչև հունիսի 11-ը բողոքի ցույցերի ժամանակ ոստիկանության գործողությունների իրավաչափությունը պարզելու համար ուղարկված հարցմանը ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունից պատասխանեցին, որ իրականացվել է 23 ծառայողական քննություն, որոնցից 18-ի քննությունը կասեցվել է և որոշվել է դրանց անդրադառնալ նույն փաստերի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթների ավարտից հետո: Քննություններից 2-ի արդյունքում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, իսկ 3-ի դեպքում ոստիկանության ծառայողներն ազատվել են կարգապահական պատասխանատվությունից: 2024 թ. հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ երկու ծառայողական քննություն է նախաձեռնվել, որոնց ընթացքը կասեցվել է մինչև քրեական վարույթի ավարտը: Իրականացվել է 8 ուսումնասիրություն, որոնց արդյունքում ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել (*ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պատասխանը տե՛ս Հավելվածներ 1 և 2-ում*): **Այսպիսով, եթե 2022-2023 թթ.-ին մեկ ոստիկան ենթարկվեց «Նկատողություն» ձևովով կարգապահական տույժի, ապա 2024 թ. ընթացքում ոստիկանության գործողություններում իրավասու մարմինները կարգապահական բնույթի խախտում առհասարակ չհայտնաբերեցին:**

Նման մոտեցումը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնյաների խրախուսական և գովասանքի խոսքերը ոստիկանության հակաօրինական գործողությունների վերաբերյալ խորացնում են անպատժելիության մթնոլորտը համակարգում, ինչն, իր հերթին, հանգեցնում է ավելի ծանր ու շարունակական խախտումների:

Հաջորդիվ տարբեր խմբերի և ոստիկանության գործողությունների օրինակով փաստվում է վերոգրյալը:

2.1. Բողոքի ցույցների մասնակիցների իրավունքների խախտումները

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման ՁԼՄ մշտադիտարկում է իրականացնում 2015 թ.-ից: Մշտադիտարկման 10 տարիների ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը նվազագույն են եղել հետհեղափոխական առաջին տարում՝ 2019 թ., սակայն դրա հաջորդ տարին՝

կրկնապատկվեցին, իսկ 2024 թ. արձանագրվեց խախտման 155 դեպք (տե՛ս Գծապատկեր 1): Ընդ որում, 129 դեպքը (դեպքերի 82,7%) տեղի է ունեցել երկու ամսում՝ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մեկնարկից՝ 2024 թ. ապրիլի 19-ից մինչև հունիսի 12-ն ընկած ժամանակահատվածում: Մշտադիտարկման արդյունքները փաստում են, որ ոստիկանության կողմից անհամաչափ գործողություններ են իրականացվում (անհամաչափ ուժի կիրառում, բողոքի ակցիաների մասնակիցներին ազատությունից զրկելու ոչ իրավաչափ գործողություններ) մասնավորապես իշխանության գործողությունների դեմ բողոքի ակցիաների ժամանակ:

Ոստիկանության ծառայողների գործողությունները միտված են քաղաքացիների մոտ վախի զգացում ձևավորելուն՝ կանխելու նրանց մասնակցությունը բողոքի ակցիաներին: 2023 թ. արձանագրվեցին ոստիկանության բաժիններում փաստաբաններին ծեծի ենթարկելու դեպքեր: Աննախադեպ էին ոստիկանության բռնություններն անչափահասների նկատմամբ ինչպես հավաքների ընթացքում, այնպես էլ ոստիկանության բաժիններում, որոնք զուգորդվում էին սպառնալիքներով՝ կանխելու համար նրանց հետագա մասնակցությունը հավաքներին: Նրանք սպառնում էին, օրինակ, որ «*էնպիսի իրավիճակ կստեղծեն, որ դպրոց նույնիսկ չեն կարողանա այդ երեխաները այսուհետև հաճախել*»: 2024 թ. արձանագրվեց ոստիկանության ծառայողի կողմից անչափահասի մազերից քաշելու դեպք՝ նրան միտումնավոր ցավ պատճառելու նպատակով:

Առհասարակ վերջին երկու տարիների ընթացքում ոստիկանության առանձին գործողություններն անձանց ցավ պատճառելու, նրանց մարդկային արժանապատվությունը նվաստացնելու միտում ունեն:

2.2. Խոշտանգման, մարդկային արժանապատվությունը նվաստացնող դեպքերը

Հայաստանի կառավարությունը չի իրականացնում խոշտանգման դեպքերի կանխմանն ուղղված միջոցառումներ: Ավելին, օրինակ՝ 2021 թ. լուծարվեց Հայաստանի Հատուկ քննչական ծառայությունը և խոշտանգման դեպքերի քննությունը վերապահվեց Ազգային անվտանգության ծառայությանը, ինչը հետընթաց էր՝ համակարգում բռնությունները կանխարգելելու տեսանկյունից: Համաձայն «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 3-րդ հոդվածի՝ «Ազգային անվտանգության մարմինը վարչապետին ենթակա մարմին է»: Այսինքն՝ այն անկախ և անաչառ մարմին համարվել չի կարող, հետևաբար՝ չի կարող ապահովվել խոշտանգման գործերով քննության արդյունավետության առաջնային և կարևորագույն չափանիշը: Այս փոփոխությանը հաջորդած տարիներին

արձանագրված խոշտանգման դեպքերով գործեր են հարուցվել ոչ թե խոշտանգման, այլ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հոդվածներով: Բացի դրանից, եթե մինչև 2024 թ.արձանագրված խոշտանգման դեպքերը տեղի են ունեցել ոստիկանության բաժիններում, ապա 2024 թ. մարտին արձանագրվեց ոստիկանության ծառայողների կողմից **ոստիկանության բաժիններից դուրս** (Արին Բերդի փողոցի մոտակայքում) մի քանի ժամ ծեծելով, վիրավորելով և նվաստացնելով անձից տեղեկություններ կորզելու դեպք: 2024 թ. ապրիլին էլ արձանագրվեց դեպք, երբ քաղաքացուն քննչական կոմիտեից ձերբակալվածների պահման վայր տեղափոխելիս ոստիկանության ծառայողները կայանեցին մեքենան և անձնական կարիքները հոգալու պատրվագով իջան մեքենայից: Հաջորդիվ 4-5 դիմակավորված անձինք մոտեցան մեքենային, խոշտանգեցին, սեռական նվաստացման ենթարկեցին քաղաքացուն: **Ոստիկանության ծառայողների նման վարքագիծը հիմք է տալիս հիմնավոր կասկած առաջադրել, որ քաղաքացուն խոշտանգելու և մարդկային արժանապատվությունը նվաստացնելու գործողությունները եղել են հրահանգված, ինչը բացարձակապես անընդունելի է, և բացի կատարողներից պատասխանատվության պետք է ենթարկվեն ինչպես ուղեկցող ոստիկանության ծառայողները, այնպես էլ պատվիրատուները: Մինչդեռ, դեպքից 8 ամիս անց անձին խոշտանգելու գործով նույնիսկ չեն նույնականացվել ուղեկցող ոստիկանները:**

2.3. Պատգամավորների նկատմամբ ոչ իրավաչափ գործողությունները

Ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ գործողությունների թիրախում են նաև անձեռնմխելիությունից օգտվող պատգամավորները: Եթե 2020 թ. արձանագրվեցին ոստիկանության ծառայողների կողմից պատգամավորներին բերման ենթարկելու փորձեր, ապա 2022 թ. ոստիկանության ծառայողներն արդեն հատակին տապալելով բերման ենթարկեցին կառավարության շենքի առաջ ակցիա իրականացնող պատգամավոր Թադևոս Ավետիսյանին, բռնի ուժի գործադրմամբ, մարդկային արժանապատվությունը նվաստացնող ձևով փորձեցին բերման ենթարկել պատգամավոր Արծվիկ Մինասյանին: 2023 թ. Հանրապետության հրապարակում ոստիկանների գործողությունների հետևանքով ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը քթի կոտրվածք ստացավ, իսկ 2024 թ. տասնյակ ոստիկաններ ՀՅԴ գրասենյակի առջև դաժան ծեծի ենթարկեցին ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աշոտ Սիմոնյանին, ապա տեղափոխեցին անհայտ ուղղությամբ: Տեսագրության մեջ բռնության գործադրումը ուղեկցվեց նաև ոստիկանության ծառայողների կողմից հնչեցվող հայհոյանքներով: Դեպքի առթիվ հաղորդում ներկայացվեց դատախազություն: ՀՀ ներքին գործերի նախարարությունը հայտնեց, որ կատարված, դեպքի առթիվ մեկ ոստիկանի լիազորություններ դադարեցվել են: **Տեսագրությունում բռնություն գործադրող ոստիկանների 20-25**

հոգանոց խումբ էր: Անհասկանալի է, թե ինչ հիմքով են դադարեցվել միայն մեկ ոստիկանի՝ Գևորգ Մկրտչյանի լիազորությունները: Ավելին՝ միջադեպից մեկ ամիս անց ոստիկանը վերականգնվեց իր աշխատանքին, իսկ հարուցված քրեական գործով մինչ այժմ մեղադրյալներ չկան: Փաստացի, պատգամավորներին բերման ենթարկելու փորձերը 2020 թ. անպատիժ թողնելը հանգեցրեց 2024 թ. պատգամավորի նկատմամբ ակնհայտ բռնության գործադրման և առևանգման:

2.4. Լրագրողների նկատմամբ ոչ իրավաչափ գործողությունները

Ոստիկանության ծառայողները ոչ միայն խոչընդոտում են լրագրողների մասնագիտական գործունեությունը, այլև բռնություն են կիրառում նրանց նկատմամբ, բերման, նույնսիկ վրաերթի ենթարկում: Լրագրողների նկատմամբ բռնությունների թիվը աճում է, ինչը նույնպես պայմանավորված է այն փաստով, որ դրանց համար պատասխանատվության ենթարկվածներ չկան: Մասնավորապես եթե 2020 թ. ոստիկանության ծառայողների կողմից ֆիզիկական բռնություն կիրառելու հետևանքով վնասվածք էր ստացել 5 լրագրող, իսկ բերման ենթարկվել մեկ օպերատոր, ապա 2024 թ. վնասվածք ստացած լրագրողների թիվը 19 էր, որոնցից 10-ը՝ հատուկ միջոցի կիրառման հետևանքով:

2.5. Ոչ ծառայողական հագուստով անձանց և քաղաքացիական ավտոմեքենաների ներգրավումը

Շարունակական բնույթ է կրում Ոստիկանության կողմից քաղաքացիական հագուստով անձանց ներգրավման պրակտիկան: Ավելին՝ 2020 թ.-ից հետո հավաքներին ներգրավվել են դիմակավորված, առանց տարբերանշանի անձինք, որոնք ակցիաների մասնակիցների նկատմամբ բռնի ուժ են կիրառել և բերման ենթարկել:

Ոստիկանության կողմից անձանց բերման ենթարկելիս օգտագործվել են նաև քաղաքացիական մեքենաներ: Եթե մինչև 2024 թ. դրանք հայկական համարանիշներով կամ առանց համարանիշ ավտոմեքենաներ էին, ապա 2024 թ. արձանագրվեց դեպք, երբ անձը ոստիկանական համազգեստով անձանց կողմից բերման ենթարկվեց վրացական համարանիշներով քաղաքացիական մեքենայով:

2.6. Հատուկ միջոցի կիրառումը

2020-2024 թթ. ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից երեք տարի անընդմեջ (2022; 2023 և 2024 թթ.) կիրառվեց հատուկ միջոց՝ բոլորն օրենքի խախտմամբ: Լուսաձայնային նռնակներ նետվեցին ցուցարարների ուղղությամբ՝ առանց օրենքով սահմանված 2,5 մ. հեռավորությունը պահպանելու ու նախազգուշացման պահանջների պահպանման: Նախորդ տարիներին հատուկ միջոցների կիրառման կապակցությամբ հարուցված քրեական գործերը որևէ զարգացում չստացան:

Հատկանշական է, որ 2018 թ. զանգվածային ակցիաների ժամանակ այդ ժամանակվա փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը, հատուկ միջոցների գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ անցած չլինելով, չունենալով հատուկ որակավորում և դրանով իսկ պայմանավորված՝ չունենալով լուսաձայնային հատուկ միջոցներ ստանալու և անձամբ գործադրելու լիազորություն, դրանց կիրառման համար թույլատրելի չափանիշների խախտմամբ, ցուցարարների նկատմամբ գործադրեց ընդհանուր առմամբ 8 հատ «Զարյա» տեսակի լուսաձայնային նռնակ: 2024 թ. հունիսի 3-ին նա մեղավոր ճանաչվեց: Դատավճռից 9 օր հետո՝ 2024 թ. հունիսի 12-ին, ցուցարարների նկատմամբ կիրառվեց, ըստ որոշ գնահատականների, 25-32 նռնակ, այդ թվում օրենքով չթույլատրված «Զարյա 3» տեսակի լուսաձայնային նռնակ, իսկ քաղաքական պաշտոնյաները մինչև նախաքննութան ավարտն արդեն իսկ Ոստիկանության գործողությունները գնահատեցին իրավաչափ:

2024 թ. հունիսի 12-ին լուսաձայնային նռնակների կիրառման հետևանքով վնասվածք ստացավ 100-ից ավել անձ: Հիմք ընդունելով «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի տվյալն առ այն, որ 2024 թ. հունիսի 12-ի 16:09-ի դրությամբ Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկում և հարակից տարածքներում գտնվել է շուրջ 3400 մարդ և համադրելով մասնակիցների թիվը կիրառված հատուկ միջոցների հետևանքով հիվանդանոցներ դիմած քաղաքացիների թվի հետ (106 քաղաքացի)՝ կարող ենք եզրահանգել, որ մասնակիցների նվազագույնը **3 տոկոսը** ստացել է մարմնական վնասվածք: Ի համեմատություն՝ 2018 թ. ապրիլի 16-ին Բաղրամյան պողոտայում կիրառված հատուկ միջոցի հետևանքով մարմնական վնասվածք ստացավ 54 անձ, այսինքն **մասնակիցների 1,8 տոկոսը** (ըստ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ապրիլի 16-ին ժամը 14:00-ի դրությամբ Ֆրանսիայի հրապարակում էր **3000 քաղաքացի**): Այսինքն, 2024 թ. հունիսի 12-ին տուժածների թիվը գրեթե կրկնակի գերազանցում է 2018 թ. ապրիլի 16-ին տուժածների թվին:

2.7. Իշխանության ներկայացուցիչների արձագանքը ոստիկանության գործողություններին

2020-2024 թթ. ընթացքում Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց հայտարարություններով, ելույթներով գովաբանել են ոստիկանության գործողությունները՝ չնայած դրանց հակաօրինական, ոչ իրավաչափ բնույթին, ինչպես նաև ուղղորդել են ոստիկանության և առհասարակ իրավապահ համակարգի գործողությունները, հարուցվելիք քննությունների ընթացքը:

Ուշագրավ է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի՝ ոստիկանության գործողությունների գնահատականը: 2022 թ.-ին քաղաքացիների նկատմամբ անհամաչափ ուժ կիրառելու, քաղաքացու գլխին հարվացելու, մազերից քաշելու գործողությունները նա գնահատեց **«ընդհանուր առմամբ համաչափ»**, իսկ արդեն 2024 թ. ոստիկանության կողմից հատուկ միջոցներ կիրառումից հետո ԱԺ-ում հայտարարեց, որ Ոստիկանությունն **«արդարացիորեն կիրառել է լուսաձայնային նռնակներ»**: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի նման գնահատականն արմատապես հակադրվում է 2018 թ.-ին, լուսաձայնային նռնակից վիրավորում ստացած այն ժամանակ ցույցի մասնակից Ալեն Սիմոնյանի պնդմանը, որ «**լուսաձայնային նռնակների կիրառումը պետք է արգելվի ընդհանրապես, դրանք չեն կարող անվտանգ լինել**»:

ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանն էլ ցուցարարների նկատմամբ հատուկ միջոց կիրառելու ընթացքում ԱԺ-ից շնորհակալություն հայտնեց բոլոր այն ոստիկաններին, ովքեր «*հենց հիմա ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրենց պարտականություններն են կատարում*» և վստահեցրեց, որ առավել սկզբունքայիններն իրենց աշխատանքի դրական գնահատականը կստանան: Հաջորդ օրն էլ վարչապետը Ոստիկանության հակազդեցությունը գնահատեց «իրավաչափ և պրոֆեսիոնալ»:

Բացի այն, որ պրոֆեսիոնալ չեն կարող գնահատվել Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի գործադրումը և արգելված հատուկ միջոցի կիրառումը, որի հետևանքով ավելի քան 100 քաղաքացի մարմնական մնասվածք ստացավ, քաղաքական բարձրաստիճան պաշտոնյաների նման խրախուսական արտահայտություններ վտանգում են նաև քրեական գործի ընթացքը՝ ուղղորդելով այն անպատժելիության դաշտ:

Վերը ներկայացված զարգացումները վկայում են իրավապահ համակարգում անպատժելիության խրախուսման մասին: Ոստիկանության շարունակվող ոչ իրավաչափ և ոչ համաչափ գործողություններն էլ ուղղված են անձանց մոտ վախի զգացման ձևավորմանը և նրանց մասնակցությունը հավաքներին կանխելուն, իսկ բարձրաստիճան պաշտոնյաների դիրքորոշումները խրախուսում են նման վարքագիծը:

ԲԱԺԻՆ 3. 2024 Թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2024 թ. բողոքի ցույցերի ժամանակ Հայաստանի ոստիկանության ծառայողների գործողություններն ուղեկցվեցին մասնակիցների նկատմամբ ոչ իրավաչափ և ոչ համաչափ ուժի կիրառմամբ, բռնության գործադրմամբ նրանց անհիմն բերման ենթարկելով, հատուկ միջոցի չհիմնավորված ու օրենքի խախտմամբ կիրառմամբ:

3.1. Բողոքի ցույցների ժամանակ ոստիկանության գործողությունները 2024 թ. ապրիլի 19-ից հունիսի 12-ն ընկած ժամանակահատվածում

2024 թ. ապրիլի 19-ին մեկնարկած բողոքի ցույցները կարելի է պայմանական բաժանել փուլերի՝

- ապրիլի 19-ից մայիսի 4՝ բողոքի ցույցեր իրականացվեցին հիմնականում Տավուշի մարզում
- մայիսի 9-ից մայիսի 25՝ բողոքի ցույցեր և հանրահավաք իրականացվեցին հիմնականում մայրաքաղաք Երևանում
- մայիսի 26-ից հունիսի 8՝ բողոքի ցույցերն ու հանրահավաքներն առավել մեծ թափ ստացան
- հունիսի 9-ից հունիսի 12՝ հանրահավաքը տեղափոխվեց Բաղրամյան պողոտա և հանգուցալուծվեց ոստիկանության կողմից հատուկ միջոցի կիրառմամբ:

3.1.1. Ապրիլի 19-մայիսի 4

Սահմանազատման մասին հայտարարելու օրը՝ ապրիլի 19-ին, Տավուշի Կիրանց, Բաղանիս, Ոսկեպար համայնքների բնակիչները բողոքի ցույցեր սկսեցին՝ փակելով Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը: Ցուցարարների հիմնական պահանջն էր սահմանազատման գործընթացի կասեցումը: Բողոքի ցույցերը միջպետական ճանապարհ փակելու ձևով շարունակվեցին մինչև մայիսի 4-ը: Ոստիկանության ծառայողները պարբերաբար բացում էին փակ ճանապարհները՝ ուժի գործադրմամբ, անհարգալից բառամթերքի («տարեք սրան, արա, տարեք կոխեք...», «դե ուրեմը ձենդ կտրի» և այլն) կիրառմամբ, անձանց կամայական բերման ենթարկելով (տեսագրության 0:45 րոպեից), անձի առողջությանը վնաս պատճառելով: Մասնավորապես՝ Ոստիկանության գործողությունների հետևանքով երկու անձի ինքնազգացողություն վատացավ, քաղաքացիներից մեկն ընկավ և վնասեց ոտքը, իսկ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանն ուշագնաց եղավ:

Արձանագրվեց նաև ՀՀ ԱԺ պատգամավորի բերման ենթարկելու դեպք: **Հիշեցնենք, որ ՀՀ ԱԺ պատգամավորն օժտված է սահմանադրաիրավական հատուկ կարգավիճակով, վերջինս ազատությունից կարող է զրկվել օրենսդրությամբ սահմանված հատուկ ընթացակարգով կամ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ դրանից անմիջապես հետո:**

Արձանագրվեց նաև դեպք, երբ կնոջն իր մեքենայից հանել և բերման են ենթարկել՝ ակցիայի մասնակիցներին ազդանշանով ողջունելու համար: **Նույնիսկ եթե հիմք ընդունենք օրենսդրական կարգավորումները և դա համարենք անհիմն ձայնային ազդանշան տալու դեպք, անձի համար դա առաջացնում է վարչաիրավական հետևանք, ոչ թե ազատությունից զրկում:**

2024 թ. ապրիլի 26-ին տեղեկություն տարածվեց, որ ոստիկանությունը Կիրանցում լուսաձայնային նռնակ է կիրառել ճանապարհը փակած բնակիչների նկատմամբ, որը ՀՀ ՆԳՆ-ն հերքեց: Այնուամենայնիվ Կիրանցից 2 ոստիկան և 3 քաղաքացիական անձ տեղափոխվեց բժշկական կենտրոն, և դեպքի հանգամանքները պարզելու համար նախաձեռնվեց քրեական վարույթ, որի ընթացքի և/կամ արդյունքների մասին մինչ օրս որևէ տեղեկություն չի հանրայնացվել: Արձանագրվեցին նաև անչափահասների առողջությանը վնաս պատճառելու դեպքեր:

2024 թ. մայիսի 2-ին՝ վաղ առավոտյան ժամը 6:00-ի շրջանում, Ոստիկանության կողմից ապօրինի բռնի ուժ կիրառվեց __Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը փակած և Կիրանցի հատվածում «ականազերծման աշխատանքներին» խոչընդոտող կիրանցիների նկատմամբ: Newday.am-ի թղթակցի հարցին, թե ինչ հիմքով Ոստիկանությունը վաղ առավոտյան բիրտ ուժ կիրառեց Կիրանցում ճանապարհը փակած բնակիչների նկատմամբ ու բերման ենթարկեց, փոխոստիկանապետ Կարեն Հակոբյանը պատասխանեց. «*Լավ եմ արել, իրավական հիմքերն ունեցել եմ*»: ՆԳՆ-ն այս դեպքում ևս հերքեց ինչպես հատուկ գործողություն կատարելը ճանապարհ բացելու համար, այնպես էլ քաղաքացիների նկատմամբ բերման ենթարկելիս բռնություն գործադրելու հանգամանքը: Մինչդեռ, վաղ առավոտյան դեպի Կիրանց տանող ճանապարհին ոստիկանության գնդապետը (որը եղել է քաղաքացիական հագուստով), «Ազատությանը» տեղեկացրեց, որ. «*Հատուկ գործողություններ է ստեղից էն կողմ կատարվում, ձեր անվտանգության համար չի կարելի*»:

Տեսագրությունը, վերանշյալ տեղեկությունները, ինչպես նաև Ոստիկանության գործելաոճը հիմք են տալիս արձանագրելու անհամաչափ ուժի կիրառման փաստը:

Փաստացի, ՆԳՆ-ն կա՞մ իրականությանը չհամապատասխանող պաշտոնական տեղեկություն է հաղորդել, կա՞մ համակարգի ծառայողները իրազեկված չէին, թե ինչ գործողություններ են կատարում:

«Ազատության» հետ զրույցում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար, իրավապաշտպան Արթուր Սաքունցը ոստիկանության ծառայողների գործողությունները գնահատեց որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավաքների ազատության իրավունքի խախտում՝ նշելով. *«...եթե նույնիսկ կարող են առանձին անհատներ, ենթադրենք, խաղաղ ցույցի կամ խաղաղ հավաքի սկզբունքները խախտել, ապա միայն նրանց կարող են բերման ենթարկել, այն էլ՝ պետք է կարողանա հիմնավորի և պե՛տք է հիմնավորի, որ, այո, հենց կոնկրետ այդ անձինք, որոնց բերման են ենթարկում և խաղաղ հավաքի վայրից հեռացնում են, նրանք խախտում են խաղաղ հավաքի սկզբունքները»:*

3.1.2. Մայիսի 9-մայիսի 25

2024 թ. մայիսի 4-ին Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը հայտարարեց Կիրանցից դեպի Երևան երթ սկսելու և Երևանում մայիսի 9-ին հանրահավաք հրավիրելու մասին: Հանրահավաքի ժամանակ շարժման առաջնորդը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին մեկ ժամ տվեց հրաժարականի համար, որից հետո կոչ արեց մայիսի 10-ից բողոքի ցույցեր սկսել ամբողջ հանրապետությունում:

2024 թ. մայիսի 11-ին քաղաքացիները Երևանի տարբեր հատվածներում փողոցներ փակեցին: Մեծ թվով ոստիկաններ, այդ թվում՝ կարմիրբերետավորներ, բերման ենթարկեցին խաղաղ ակցիաներ իրականացնող քաղաքացիներին և նույնիսկ մայթերին նստած անձանց: **Եթե դիցուք փողոցը փակած քաղաքացիների դեպքում ոստիկանի օրինական պահանջը վերաբերում է երթևեկելի հատվածը բացելուն, ապա անհասկանալի է մայթերին կանգնած քաղաքացիներին բերման ենթարկելու հիմքը:**

Արձանագրվեցին փաստաբանի, անչափահասի բերման ենթարկելու, ինչպես նաև մարմնական վնասվածքների դեպքեր: Մեկ դեպքում Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման հետևանքով քաղաքացին ոտքի կոտրվածք ստացավ:

Ոստիկանության գործողությունները բացի անհամաչափ ուժի կիրառումից ուղեկցվեցին սպառնալիքով՝ «*դե որ տունդ մտնեն, թալանեն, հանկարծ 1-02 չզանգես*», անհարգալից, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց խարանող արտահայտություններով՝ «*հասկանում ենք, որ հոգեկան շեղում ունես, հանգստացի գնա էն կողմ*»: Սպառնացել են նաև անչափահասներին Ոստիկանության բաժիններում: 2024 թ. մայիսի 18-ին իրավապաշտպան Սերգեյ Հարությունյանը հայտնեց, որ «Ոստիկանական որոշ բաժիններում մի շարք ոստիկաններ անցել են բոլոր սահմանները և մասնավորապես անչափահաս երեխաների հետ կապված սպառնալիքներ են հնչեցրել, որ էնպիսի իրավիճակ կստեղծեն, որ դպրոց նույնիսկ չեն

կարողանա այդ երեխաները այսուհետև հաճախել, ծնողներին սպառնացել են, որ կզրկեն ծնողական իրավունքներից»:

2024 թ. մայիսի 19-ին Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդագրություն տարածեց, որ «Սահմանապահ զորքերը Կիրանց գյուղի հատվածում իրականացնում են Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պահպանությունը ստանձնելուն ուղղված նախապատրաստական աշխատանքներ: Ելնելով անվտանգային և օպերատիվ անհրաժեշտությունից՝ Կիրանց բնակավայրում հաշվառում չունեցող քաղաքացիների մուտքը բնակավայր ժամանակավորապես սահմանափակվել է»: Ոստիկանությունն էլ արգելեց ընդդիմադիր պատգամավորների և լրագրողների մուտքը: **Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ «ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»: Ըստ այդմ, հայտարարությունը որևէ իրավական հիմք չի ունեցել, Ոստիկանության ծառայողների գործողությունները խախտել են ազատ տեղաշարժի իրավունքը:**

3.1.3. Մայիսի 26-հունիսի 8

2024 թ. մայիսի 26-ին Հանրապետության հրապարակում հավաքով մեկնարկեց պայմանական երրորդ փուլը, երբ հայտարարվեց, որ շարժման վարչապետի թեկնածուն Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանն է:

2024 թ. մայիսի 27-ից քաղաքացիները կրկին ճանապարհներ փակեցին: Կարմիրբերետավորներն էլ անհամաչափ ուժի կիրառմամբ բերման ենթարկեցին թե՛ փողոցը փակած, թե՛ մայթերին կանգնած անձանց՝ առանց որևէ պահանջ ներկայացնելու:

ՀՀ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանը լրագրողներին ասեց. *«Մայթեզրին կանգնած ոչ մի քաղաքացու չեն տարել անտեղի, տեսախցիկները փակում են, հետո վազում, կանգնում են լակոտի պես այնտեղ, բա ի՞նչ պիտի անեն»:* Իրավապաշտպան Արթուր Սաքունցը քննադատեց ոստիկանապետին այս բառապաշարի համար. *«...իշխանության ներկայացուցիչները նման վարքագիծ չպետք է դրսևորեն»*:

Արձանագրվեցին նաև ԱԺ պատգամավորներին քաշքշելու, բերման ենթարկելու, ինչպես նաև ծեծի

ենթարկելու դեպքեր:

Մայիսի 27-ին ազդանշան տալու համար Ոստիկանության ծառայողները բերման ենթարկեցին և դաժան ծեծի ենթարկեցին մի երիտասարդի, իսկ ոստիկանության բաժնում փորձեցին կոծկել բռնության հերթական դեպքը: Ինքնազգացողությունը վատանալու պատճառով իրավապահները ստիպված շտապ օգնության անձնակազմ հրավիրեցին, որն էլ նրան անհապաղ տեղափոխեց թիվ 1 կլինիկական հիվանդանոց: Ոստիկանության գործողությունների հետևանքով մայիսի 31-ին Արտաքին գործերի նախարարության շենքի մոտ ցույցի ժամանակ 7 անձ ստացավ վիրավորում: Մասնակիցներից մեկի ճակատին մնացել էր ոստիկանական կոշիկի հետքը (նկարի աղբյուրը՝ aravot.am): Ոստիկանության ծառայողների կողմից անձանց նկատմամբ ուժի գործադրումը շարունակվեց անգամ այն դեպքերում, երբ նրանք գտնվել են Ոստիկանության ծառայողների հսկողության ներքո: Ըստ բերման ենթարկված անձանցից մեկի՝ Ոստիկանության ծառայողները «մազերից են քաշել», ըստ բաժանմունքում նկարահանված տեսանյութի՝ բերման ենթարկված առնվազն 15 տղամարդկանցից մեկը ձեռքով թևն է բռնել, մյուսը՝ դեմքը:

Մայիսի 28-ին Ոստիկանության ծառայողներն առանց որևէ հիմնավորման փորձեցին խոչընդոտել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ու նրան ուղեկցող հոգևորականների մուտքը դեպի Սարդարապատի հուշահամալիր:

2024 թ, ապրիլի 19-ից մայիսի 31-ը Ոստիկանության բաժիններ բերման ենթարկվեց ավելի քան 700 անձ՝ Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով: «**Ավանդաբար ներկայացվող» ոստիկանի օրինական պահանջը չկատարելու հիմքով բերման ենթարկելը չի կարող համարվել արդարացի, քանի որ ծառայողը պարտավոր է իրապես հիմնավորել իր պահանջի օրինական լինելը:**

3.2. Հատուկ միջոցի կիրառումը հունիսի 12-ի բողոքի ցույցերի ժամանակ

2024 թ. հունիսի 9-ին Հանրապետության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքի ավարտին Բագրատ Սրբազանն իր աջակիցների հետ երթ սկսեց: Ոստիկանական մեծաթիվ ուժեր թույլ չտվեցին, որ երթի մասնակիցները մտնեն Դեմիրճյան փողոց: Արդյունքում հայտարարվեց Բաղրամյան պողոտայում նստացույց սկսելու մասին.տեղադրվեցին վրաններ:

Հունիսի 12-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, մեկնարկեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հանրահավաքն Ազգային ժողովի շենքի մոտ: Երբ անվտանգության աշխատակիցները խոչընդոտեցին ընդդիմադիր պատգամավորներ Արթուր Սարգսյանի և Գառնիկ Դանիելյանի մուտքն Ազգային ժողովի շենք, հրմշտոց սկսվեց Ոստիկանության ծառայողների և հանրահավաքի մասնակիցների միջև: Ոստիկանությունը կիրառեց հատուկ միջոց՝ լուսաձայնային նռնակներ, այդ թվում

արգելված «Զարյա 3» տեսակի նռնակ, ինչի հետևանքով ավելի քան 100 մարդ տուժեց: Նրանցից 57-ը, ըստ Առողջապահության նախարարության, ստացան բեկորային վնասվածք: Ըստ որոշ գնահատականների, կիրառվել է 25-32 նռնակ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանը կիրառված նռնակների թվի վերաբերյալ՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը պատասխան չի տվել՝ հղում անելով քննվող քրեական վարույթի ընթացքի մեջ լինելու հանգամանքին: ՀՀ քննչական կոմիտեից ու դատախազությունից կիրառված նռնակների թվի վերաբերյալ հարցին առհասարակ չեն անդրադարձել:

«Ազատության» տեսագրություններից մեկում արձանագրված է պահը, երբ նռնակն ընկնում է ցուցարարներից մեկի ոտքի մոտ և վերջինիս կողմից այն վերցնելուց հետո պայթում ձեռքի մեջ: **Տեսագրվածից կարող ենք արձանագրել, որ չի պահպանվել հատուկ միջոցի՝ անձից 2.5մ հեռավորության վրա կիրառելու օրենսդրական պահանջը:** Ըստ այդմ, հիմնավոր չէ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի պնդումը, որ «եթե չվերցներ, դա տեղի չէր ունենա»:

Հաշվի առնելով ուսումնասիրության արդյունքները, պետական մարմինների հետագա գործողությունները, մասնավորապես օրենսդրական փոփոխությունները և պատշաճ տեղեկատվություն չտրամադրելը, կարող ենք եզրակացնել, որ հատուկ միջոցի կիրառումը կատարվել է օրենսդրական կարգավորումների խախտումներով: Մասնավորապես՝

- կիրառվել է «Զարյա 3» տեսակի՝ բեկորային վնասվածք պատճառող լուսաձայնային նռնակ, որը ներառված չի եղել «Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին» N 09-Ն Առողջապահության նախարարի հրամանում: Նռնակի օգտագործումը մարդու առողջության, այդ թվում՝ լսողության համար ծանր հետևանք կարող է ունենալ: Այն օգտագործվում է ժամանակավորապես ճնշելու զինված հանցագործի դիմադրողականությունը: Դրա ձայնային ճնշման մակարդակը (160±15 դեցիբել) կրկնակի անգամ գերազանցում է մարդու համար անվտանգ մակարդակը (85 դեցիբել): Ըստ այդմ, խիստ մտահոգիչ է, հատուկ միջոցի կիրառումից երկու շաբաթ անց՝ 2024 թ. հունիսի 26-ին, առանց հիմնավորման, վերը նշված հրամանում լրացում կատարելը՝ թույլատրվելով «Զարյա 3» տեսակի նռնակի կիրառումը:
- Չի պահպանվել անձից նվազագույնը 2,5մ հեռավորության վրա հատուկ միջոցի կիրառման օրենսդրական պահանջը:
- Չի ապահովվել պատշաճ նախազգուշացման պահանջը: Ցուցարարների համար հատուկ միջոցի կիրառումն անսպասելի է եղել: Թեև Ոստիկանությունը հավաքի ընթացքում զգուշացրել է ցուցարարներին ոստիկանի օրինական պահանջը չկատարելու դեպքում հատուկ միջոց կիրառելու մասին (17:30), այնուամենայնիվ այն կիրառվել է առանց նախազգուշացման մոտ 2 ժամ անց (19:52): Լրագրողները

նույնպես արձանագրում են, որ որևէ զգուշացում մինչ հատուկ միջոցի կիրառումը չի արվել:

- Պարզ չէ, թե արդյոք կիրառողներն ունեցել են համապատասխան լիազորություն: 2018 թ. մեղադրանք էր առաջադրվել Ոստիկանության զորքերի նախկին հրամանատար Լևոն Երանոսյանին առ այն, որ վերջինս, չունենալով հատուկ միջոցառումների իրականացման միջոց հանդիսացող «Զարյա» տեսակի լուսաձայնային նռնակներ ստանալու և անձամբ գործադրելու լիազորություն, դրանց կիրառման համար թույլատրելի չափանիշների խախտմամբ, գործադրել է լուսաձայնային նռնակներ: Մինչդեռ 2024 թ. հունիսի 12-ին քաղաքական պաշտոնյաներն մինչև նախաքննության ավարտն արդեն իսկ Ոստիկանության գործողությունները գնահատել են իրավաչափ:

Ոստիկանության ծառայողները հունիսի 12-ին բռնություն գործադրեցին ցուցարարների նկատմամբ, մինչև անգամ ոստիկանական մեքենայում, այգում: Ցուցարարներից մեկի՝ Genesis Armenia ուղեղային կենտրոնի հիմնադիր Աբրահամ Գասպարյանի մոտ գլխուղեղի ցնցում է ախտորոշվել, նաև կողոսկրերն են կոտրվել:

Ինչպես փաստում են լրագրողները, Ոստիկանները մարդկանց տապալել են գետնին, հարվածել՝ առանց ձերբակալելու միտումի: **Այսինքն, Ոստիկանության ծառայողները ոչ թե մնասազերծել են պայմանականորեն խաղաղ հավաքի ընթացքը խոչընդոտող անձանց, այլ թիրախային բռնություն են կիրառել մասնակիցների նկատմամբ:**

Տեսագրություններից մեկում երևում է, թե ինչպես է ոստիկանը քաշում է անչափահաս տղայի մազերը՝ միտումնավոր ցավ պատճառելով նրան:

Ըստ հունիսի 13-ին ՀՀ քննչական կոմիտեի՝ բողոքի ակցիայի ժամանակ տեղի ունեցած դեպքերի առնչությամբ հաղորդագրության՝ **101 անձ վնասվածք է ստացել ոչ թե հատուկ միջոցի կիրառման հետևանքով,** այլ քաղաքացիների կողմից ոստիկանության ուղղությամբ նետված քարերի, փայտերի, շշերի ու ծխագլանակների, այգու մետաղական ճաղավանդակները կոտրելու, բռնության գործադրմամբ անձանց կյանքն ու առողջությունը վտանգող այլ արարքների կատարման և գույք վնասելով զուգորդված զանգվածային անկարգությունների հետևանքով:

Իրավիճակի նման մեկնաբանումը կա՛մ լեզվական վրիպակ է, կա՛մ իրավիճակը թյուր ներկայացնելու մտայնություն:

Քննչական կոմիտեն նաև մեկ օրում կարողացավ նույնականացնել զանգվածային անկարգությունների մասնակից 40 անձանց, սակայն չկարողացավ նույնականացնել վնասվածք ստացած քաղաքացիներին ու լրագրողներին: 2024 թ. հունիսի 14-ի դրությամբ որևէ մեկը տուժող չճանաչվեց, հարուցված քրեական գործ լկար, իսկ

հոկտեմբերի 23-ի դրությամբ որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված չէր:

ՀՀ ոստիկանության անօրինական գործողությունները խստորեն դատապարվեցին մի խումբ ՀԿ-ների կողմից, իսկ «Ամնեսթի Ինթերնեշնլ» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը հունիսի 13-ին կոչով դիմեց ՀՀ իշխանություններին՝ անմիջապես և անաչառ հետաքննություն նախաձեռնել տեղի ունեցած դեպքերով, քննելով այդ թվում ոստիկանության կողմից անհամաչափ ուժի գործադրման վերաբերյալ ենթադրությունները:

Այսպիսով 2024 թ. հունիսի 12-ի դեպքերի առթիվ հուլիսի 29-ին նախաքննությունն ավարտվեց և 16 անձի մեղադրանք ներկայացվեց՝ խմբակային խուլիգանության վարույթով, մինչդեռ ոստիկանության ծառայողների կողմից ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների գործադրման դեպքի առթիվ հարուցված քրեական վարույթով հոկտեմբերի 23-ի դրությամբ որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված չէր:

3.3. Ոստիկանության գործողությունները ԶԼՄ ներկայացուցիչների նկատմամբ

Խիստ դատապարտելի են ոստիկանության ծառայողների կողմից լրագրողների նկատմամբ բռնությունները՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու ժամանակ:

Տավուշի մարզում իրականացվող սահմանազատման հետ կապված բողոքի ակցիաների սկզբից ի վեր արձանագրվեց իրավապահների կողմից ԶԼՄ ներկայացուցիչների նկատմամբ բռնության 9, անհարգալից վերաբերմունքի 2, աշխատանքը՝ սարքավորումները վնասելու միջոցով խոչընդոտելու և բերման ենթարկելու մեկական դեպք: Լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելուն ներգրավվել են նաև դիմակավորված անձինք: Մասնավորապես՝

- 2024 թ. ապրիլի 23-ին Բագրատաշեն-Այրում ճանապարհին բողոքի ակցիա անցկացնող քաղաքացիների ու ոստիկանների միջև ընդհարումների ժամանակ խոչընդոտվեց «Առավոտ» օրաթերթի աշխատակից Գարիկ Մելքոնյանի օրինական մասնագիտական գործունեությունը: Իրավապահները, նկատելով, որ իրենց գործողությունները նկարահանվում են, մոտեցան լրատվամիջոցի ներկայացուցչին, նրանցից մեկը հարվածեց ու Գարիկ Մելքոնյանի ձեռքից գցեց ու կոտրեց հեռախոսը:
- Ապրիլի 25-ին ուժի կիրառմամբ բերման ենթարկվեց «Հայելի» ակումբի հիմնադիր, գլխավոր խմբագիր Անժելա Թովմասյանին: Վերջինիսն մի քանի ժամ պահեցին բաժնում:

• Ապրիլի 27-ին դիմակավորված ուժայինները Կիրանց-Իջևան ճանապարհին գետնին տապալելով փորձեցին բերման ենթարկել Newday լրատվական կայքի օպերատորին:

Նույն օրը Երևան-Թբիլիսի ճանապարհի Լոռու մարզի Դսեղ գյուղի հատվածում քաղաքացիների բողոքի ակցիան ցրելիս ոստիկանները խոչընդոտեցին այդ գործողությունները լուսաբանող՝ Oragir.News կայքի աշխատակիցների մասնագիտական գործունեությունը. հրելով գցեցին լրագրող Անի Ներկարարյանին, որը վնասվածք ստացավ, իսկ օպերատոր Զավեն Օհանյանը ստիպված դադարեցրեց նկարահանումը:

(նկարի աղբյուրը factor.am)

• Մայիսի 13-ին Երևանում ընթացող բողոքի ակցիաները ցրելիս Ոստիկանության Հատուկ նշանակության գումարտակի ծառայողները խոչընդոտեցին այդ իրադարձությունները լուսաբանող՝ ABCmedia.am լրատվական կայքի օպերատոր Միեր Դավթյանի և 24news.am-ի լրագրող Մերի Մանուկյանի աշխատանքը: Հրելու և գետնին գցելու արդյունքում Մերի Մանուկյանը վնասվածք ստացավ, կորցրեց գիտակցությունը: Թեև ոստիկաններն առաջին օգնություն ցուցաբերեցին, այդուհանդերձ, անհրաժեշտ եղավ լրագրողին հոսպիտալացնել: Ոստիկանության աշխատակիցը հրեց Միեր Դավթյանին, ապա տեսնելով, որ նա ընկել է աստիճաններին՝ առանց հետ նայելու հեռացավ:

• Մայիսի 14-ին վնասվածք ստացավ MediaHub-ի լրագրող Նարե Գևորգյանը: Ոստիկանը ծառայողական մեքենան հետիոտնային անցման վրա միտումնավոր վարեց լրագրողի վրա: Ոստիկանության Երևանի վարչության հատուկ նշանակության գումարտակի հրամանատար Հայկազ Ջոմարդյանն էլ Antifake.am լրատվական կայքի թղթակից Հասմիկ Առաքելյանին վիրավորեց. «սրբապիղծը դու ես, դու տականք ես, Հասմի՛կ Առաքելյան», երբ վերջինս «սրբապիղծ» անվանեց զոհված զինծառայողի ծնողի հետ անհարգալից խոսող ոստիկաններին:

• Մայիսի 15-ին մայրաքաղաքի Հանրապետության հրապարակում կազմակերպված բողոքի ակցիայի ընթացքում ձեռնարկված ոստիկանական գործողությունների ժամանակ ավտոբուսը հարվածեց այդ իրադարձությունները լուսաբանող՝ Oragir.News կայքի լրագրող Անի Ներկարարյանին:

• Մայիսի 27-ին Թումանյան փողոցում քաղաքացիների նկատմամբ բիրտ ուժ կիրառելու և բերման ենթարկելու ընթացքում կարմիրբերետավորները հարվածեցին ArmLur.am-ի լրագրող Աննա Սրապիոնյանին, ինչի հետևանով նա ստացավ փափուկ

հյուսվածքների սալջարդ: Նույն օրը ոստիկանության հատուկ նշանակության գումարտակի ծառայողները բողոքի ակցիայի ժամանակ հարվածեցին ու գետնին գցեցին Yerkir.am-ի օպերատոր Պարույր Ներսիսյանին, որը հեռախոսով նկարում էր: Տեսանյութում երևում է, որ օպերատորը կրում էր լրագրողական բեյջ:

- Մայիսի 31-ին Կոտայքի ոստիկանապետը Կառավարության շենքի մոտ լրագրողի հարցադրումներին արձագանքեց. «**մի էլի հարցեր տվեք, չեմ պատասխանելու...զզվում եմ ձեզնից**»:

Զանգվածային լրատվության միջոցների մեկ տասնյակ աշխատակիցներ՝ լրագրողներ և օպերատորներ յուրջ վիրավորումներ ստացան նաև հունիսի 12-ին լուսաձայնային նռնակների կիրառման հետևանքով: Ոստիկանության ծառայողների գործողությունների արդյունքում վնասվել է նաև լրագրողների տեխնիկան:

Լրագրողների նկատմամբ ցուցաբերվեց նաև ընտրողական վերաբերմունք: 2024 թ. մայիսի 20-ին, ՄԻՊ ստացված տեղեկությունների համաձայն, Ոստիկանության կողմից ՁԼՄ՝ բացառությամբ Հանրային հեռուստաընկերության ներկայացուցիչների մուտքը Կիրանց արգելվեց (Հանրային հեռուստաընկերության նկարահանող խմբի մուտքը խոչընդոտվեց այլ լրագրողների կողմից):

Բռնությունները և հատուկ միջոցի թիրախային կիրառումը լրագրողների դեմ դատապարտվեց Լրագրողներ առանց սահմանների կազմակերպության, ինչպես նաև Մամուլի միջազգային ինստիտուտի կողմից:

3.4. Ոստիկանության անգործությունը

Ոստիկանությունը դրսևորեց անգործություն՝ վտանգելով հավաքի վայրում գտնվող անձանց առողջությունն ու կյանքը:

Ապրիլի 21-ին Երկրապահ կամավորականների միության անդամներից մեկը մեքենան վարեց ցուցարարների վրա: Ապրիլի 23-ին ևս նման միջադեպ է արձանագրվեց, որի հետևանքով անձինք նաև վնասվածքներ ստացան: Ոստիկանությունը ոչ միայն չկանխեց անձանց վրաերթի ենթարկելու փորձերը, այլև դեպքերից որևէ մեկով չնույնականացվեցին և պատասխանատվության չենթարկվեցին անձանց վրաերթի ենթարկողները:

2024 թ. մայիսի 9-ին Հանրապետության հրապարակում հանրահավաքի ժամանակ ծանր բեռնատար մեքենա մտավ հրապարակ: Ոստիկանությունը «Ազատությանը» փոխանցեց, որ չենթարկվելով ոստիկանների օրինական պահանջին՝ իր բեռնատարով հրապարակ մտավ քաղաքացի: **Ոստիկանության ծառայողները ոչ միայն չկարողացան կանխել ծանր բեռնատար մեքենայի մուտքը մարդաշատ ու վերահսկվող տարածք, այլև չնախաձեռնվեց ծառայողական քննություն՝ պարզելու,**

թե արդյոք ծառայություն իրականացնող ոստիկանները ձեռնարկեցին անհրաժեշտ բոլոր միջոցները միջադեպը կանխելու համար:

3.5. Հաշվետվողականության և անպատժելիության մթնոլորտի հաղթահարման հետ կապված խնդիրները

Պահպանվում է անպատժելիության մթնոլորտը համակարգում: Թեև ՁԼՄ աշխատանքի շնորհիվ հստակ հնարավոր է նույնականացնել բռնություն կիրառող, անհարգալից վերաբերմունք ցուցաբերող, սպառնալիք հնչեցնող ոստիկաններին, որևէ գործողություն այդ անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ չի իրականացվում:

2024 թ. հունիսի 12-ին ոստիկանական գործողությունները քննելու համար հունիսի 17-ի դրությամբ 29 վարույթ էր նախաձեռնված, սակայն որևէ ոստիկանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացվեց: Մինչդեռ Քննչական կոմիտեն մեկ ամսում ավարտեց ընդդիմադիրների քրեական գործի քննությունը՝ 14 ցուցարարի մեղադրելով խուլիգանության ու զանգվածային անկարգության համար:

Ինչ վերաբերում է ծառայողական քննություններին, ապա «Տավուշը հանուն հայրենիքի» ակցիաների մեկնարկից մինչև հունիսի 17-ը Ոստիկանությունում 41 ծառայողական քննություն էր իրականացվում, միայն մեկ ծառայողի լիազորություններ էին կասեցվել, որը, սակայն, մեկ ամսից վերականգնվեց իր աշխատանքին: Մինչդեռ, օրինակ, Ոստիկանության ծառայողի նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրած անձին ձերբակալելու համար պահանջվեց 24 ժամից էլ քիչ ժամանակ:

Համաձայն ՀՀ ՆԳՆ պաշտոնական տվյալների, 2024 թ.ընթացքում կարգապահական հանձնաժողովի 6 նիստի ընթացքում քննարկվել են ոստիկանության 45 ծառայողի վերաբերյալ իրականացված ծառայողական քննությունների 40 նյութեր: Քննարկման արդյունքներով՝ ոստիկանության 43 ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր, մասնավորապես՝ 3 ծառայողի հայտարարվել է «Նկատողություն», 3 ծառայողի՝ «Խիստ նկատողություն», իսկ 37 ծառայող ազատվել է ոստիկանությունում ծառայությունից: 2023 թ. կարգապահական հանձնաժողովի 5 նիստի ընթացցքում քննարկվել է ոստիկանության 26 ծառայողի վերաբերյալ իրականացված ծառայողական քննությունների 25 նյութ: Քննարկման արդյունքներով՝ ոստիկանության 22 ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր, մասնավորապես՝ 2 ծառայողի հայտարարվել է «Նկատողություն», 3 ծառայողի՝ «Խիստ նկատողություն», 2 ծառայողի պաշտոնն իջեցվել է մեկ աստիճանով, իսկ 15-ն ազատվել են ոստիկանությունում ծառայությունից:

Այսպիսով, 2023 թ. ծառայողների 58, իսկ 2024 թ.՝ 82 տոկոսն ազատվել են ծառայությունից: Այս պաշտոնական տեղեկատվությունը, այնուամենայնիվ, լիարժեք

տեղեկություն չի հաղորդում: Մասնավորապես չի հրապարակվում, թե ինչ արարքների համար են կիրառվում կարգապահական տույժերը, այդ տույժերից որոնք են կիրառվել, օրինակ, հավաքների ժամանակ ոստիկանության ծառայողների գործողությունների համար: Հաշվի առնելով, որ նախարարությունը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանը 2022 թ. ծառայողական քննությունների վերաբերյալ տեղեկացրել էր, որ հարցման մեջ նշված 98 դեպքերից միայն մեկ դեպքով ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվեց կարգապահական տույժ «Նկատողություն» ձևով, պաշտոնական տեղեկատվության մեջ կարևոր է ներկայացնել նաև ոստիկանության ծառայողների արարքները, որոնց համար կիրառվել են կարգապահական տույժեր:

Լրագրողների դեպքում ևս Ոստիկանության ծառայողների կողմից լրագրողի մասնագիտական գործունեությունը առերևույթ բռնության գործադրմամբ խոչընդոտելու դեպքերով ծառայողական քննություն եզակի դեպքերում հարուցվեց: Մասնավորապես քննություններից մեկը կապված էր լրագրող Մերի Մանուկյանին վնասվածք պատճառելու, մյուսը՝ լրագրող Հասմիկ Առաքելյանին կարմիրբերետավորների հրամանատար Հայկազ Ջոմարդյանի կողմից «սրբապիղծը դու ես, դու տականք ես» անվանելու հետ:

Քրեական վարույթ հարուցվեց միայն ոստիկանական մեքենան միտումնավոր լրագրողի վրա վարելու դեպքով: Քրեական վարույթը, սակայն, կարճվեց՝ հանցանքի բացակայության հիմքով:

Խնդրահարույց է նաև Ոստիկանության գործողությունների վերաբերյալ Ներքին գործերի նախարարության հաշվետվողականության հարցը: Մի շարք լրատվական միջոցներ (օր՝ 168.am, Ազատություն Ռադիոկայան, Factor tv) և հասարակական կազմակերպություններ տեղեկատվական հարցումներ են ուղարկել նախարարություն՝ հատուկ միջոցի կիրառման անհրաժեշտության, հրահանգ տվողի և կիրառման իրավական հիմքերի վերաբերյալ: Նախարարությունից պատասխանեցին, որ լրացուցիչ աշխատանք պետք է կատարեն և որ կպատասխանեն 30 օրյա ժամկետում, իսկ 30 օր անց ուղղորդեցին քննչական մարմին: Քննչական կոմիտեից էլ միայն հայտնեցին՝ նախաքննությունը շարունակվում է, այս պահին հրապարակման ենթակա տեղեկատվություն չկա, չկա նաև մեղադրյալ:

Ըստ այդմ, կարող ենք եզրակացնել, որ թեև կիրառվեցին արգելված հատուկ միջոցներ՝ գործող իրավական կարգավորումների խախտմամբ, դրանց կիրառման արդյունքում տուժեցին քաղաքացիներ, արձանագրվեցին Ոստիկանության կողմից բռնության դեպքեր, որևէ ոստիկան պատասխանատվության չենթարկվեց: Պատասխանատու գերատեսչությունն էլ մինչ օրս չի ներկայացրել որևէ պարզաբանում, թե որն էր հատուկ միջոցների կիրառման և առավել ևս հենց այդ հատուկ միջոցի ընտրության հիմնավորումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, 2024 թ. ապրիլի 19-ից մեկնարկած բողոքի ցույցերի ժամանակ Ոստիկանության ծառայողներն ի զորու չեղան դրսևորել իրավաչափ և պրոֆեսիոնալ վարքագիծ: Նրանք դիմեցին անհամաչափ ուժի, կամայական բերման ենթարկելու, անձանց նվաստացնելու ավանդական դարձած գործելաոճի:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին Ոստիկանության կողմից հատուկ միջոցի կիրառումը դարձել է օրինաչափություն: Հատուկ միջոց կիրառվեց 2022 և 2023 թթ.-ին, ինչի իրավաչափությունն ու անհրաժեշտությունը այդպես էլ չհիմնավորվեց: Ընդ որում, ամեն հաջորդ տարի աճեց հատուկ միջոցի կիրառման հետևանքով վնասվածքներ ստացած անձանց թիվը, այդ վնասվածքների ծանրությունը: Ավելացավ նաև ընտրվող հատուկ միջոցի ազդեցության հզորությունը, ինչպես նաև քանակը: Այդ ամենը նման դեպքերի ոչ պատշաճ քննության, մեղավորներին չպատժելու հետևանք է:

Ըստ տեղեկությունների՝ 2024 թ. հունիսի 12-ին կիրառվեց ավելի քան 20 հատուկ միջոց: Նռնակներ նետվեցին արդեն իսկ վիրավորում ստացած անձանց ուղղությամբ, հատուկ թիրախավորվեցին լրագրողները, ինչն արձանագրեցին նաև միջազգային կազմակերպությունները: Հատուկ միջոց կիրառվեց նույնիսկ այգում գտնվող անձանց նկատմամբ, որոնք չէին կարող որևէ խոչընդոտ ներկայացնել Ազգային ժողովի բնականոն գործունեությանը: Այսպիսով, Ոստիկանության գործողությունները կա՛մ միտումնավոր և թիրախային էին, կա՛մ հախուռն, այսինքն ոչ պրոֆեսիոնալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Երաշխավորել խաղաղ հավաքներ իրականացնող քաղաքացիների իրավունքների իրացումը՝ հավաքների ազատության իրավունքի միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ Ոստիկանության կողմից այդ իրավունքի իրացման ապահովումը
- Ապահովել Ոստիկանության ծառայողների կողմից բռնության, անիրավաչափ գործողություններով թափանցիկ քննություններ նախաձեռնելու, մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու գործուն մեխանիզմ
- Երաշխավորել խոշտանգման դեպքերի ժամանակին ու պատշաճ քննությունը, մեղավորներին պատասխանատվության ենթարկելը
- Ապահովել տեսաձայնագրում ոստիկանության բոլոր բաժինների միջանցքներում, սենյակներում՝ երաշխավորելով անձանց՝ խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու բացարձակ իրավունքը
- Գնահատել հատուկ միջոցների կիրառման իրավաչափությունն ու անհրաժեշտությունը և հանրայնացնել գնահատականի արդյունքները
- Բացառել քաղաքական ղեկավարների կողմից Ոստիկանության գործողությունները խրախուսող և քննությունները ուղղորդող հայտարարությունները:

Հավելված 1. ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պատասխանն առ հոկտեմբերի 25, 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Նալբանդյան 57, հեռ. 010-59-66-52

25 . 10 . 2024թ.

Թիվ -

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ՝
Արթուր Սաքունցին

էլ. փոստ՝ sghazaryan@hcav.am

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր 2024թ. հոկտեմբերի 22-ի թիվ Ե/2024-22.10/1108 գրությանը՝ տեղեկացնում եմ, որ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման շրջանակներում 2024թ. ապրիլի 19-ից մինչև հունիսի 11-ն ընկած ժամանակահատվածում իրականացված ակցիաների ընթացքում ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափությունը պարզելու կապակցությամբ ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել են թվով 29 ծառայողական քննություններ, որոնցից 6-ը՝ նույն հանգամանքներին վերաբերվելու կապակցությամբ միացվել են և արդյունքում թվով 23 ծառայողական քննություններից 18-ի ընթացքը կասեցվել է ու որոշվել է դրանց անդրադառնալ նույն փաստերի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթներով եզրափակիչ դատավարական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, 5-ը թողնվել են անհետևանք, որոնցից 2-ի արդյունքում ոստիկանության ծառայողների գործողություններում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, իսկ մյուս 3 ծառայողական քննություններից յուրաքանչյուրով մեկական ոստիկանության ծառայող ազատվել է կարգապահական պատասխանատվությունից:

Բացի այդ, 2024թ. հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման շրջանակներում իրականացված ակցիայի ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից շարժման մասնակիցների նկատմամբ, ինչպես նաև շարժման մասնակիցների կողմից ոստիկանության ծառայողների նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրելու դեպքերի կապակցությամբ ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել են թվով 3 ծառայողական քննություններ, որոնցից երկուսը՝ միացվել են մեկ վարույթում, քանի որ վերաբերվել են նույն հանգամանքներին: Հիշյալ ծառայողական քննությունների ընթացքը կասեցվել է և որոշվել է դրանց անդրադառնալ նույն փաստերի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներով եզրափակիչ դատավարական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Բացի այդ, հիշյալ դեպքերի վերաբերյալ իրականացվել են թվով 8 ուսումնասիրություններ, որոնք թողնվել են անհետևանք՝ ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չհայտնաբերվելու կապակցությամբ:

Ինչ վերաբերում է հիշյալ ծառայողական քննություններով անցնող ոստիկանության ծառայողների թվաքանակին և կիրառված լուսաձայնային նռնակներին, ապա դրանց վերաբերյալ հստակ տեղեկատվություն հնարավոր կլինի տրամադրել ՀՀ քննչական կոմիտեում հիշյալ դեպքերի վերաբերյալ քննվող քրեական վարույթներով եզրափակիչ դատավարական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Հարգանքով՝

Պետ,
ոստիկանության գնդապետ՝ ***Վ. Մարտիրոսյան***

կատ. Ս.Նազարյան
հեռ.010-59-63-81

Հավելված 2. ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պատասխանն առ դեկտեմբերի 6, 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Նալբանդյան 57, հեռ. (ֆաքս) 011.52-93-38

«06» 12. 2024թ.

№ _____

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ կազմակերպության նախագահ

Արթուր Սաքունցին

hcav@hcav.am

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի լրումն ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2024թ. հունվարի 16-ի թիվ 28/24 գրությանը՝ տեղեկացնում եմ, որ հիշյալ վարչությունում իրականացված ծառայողական քննությամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ բռնություն գործադրելու կամ հակաօրինական որևէ գործողություն կատարելու հանգամանքները չի հաստատվել:

Հիշյալ հանգամանքները հերքվել են նաև ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննված թիվ 69103324 քրեական վարույթի նախաքննությամբ:

Պարզվել է, որ ոստիկանության ծառայողների գործողությունները բխել են <<Ոստիկանության մասին>> ՀՀ օրենքի պահանջներից և եղել են իրավաչափ:

Բացի այդ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողները համազգեստը կրել են ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 12-ի թիվ 1446-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Միաժամանակ, ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման այլ հատկանիշներ նույնպես ի հայտ չեն եկել, ուստի ծառայողական քննության արդյունքները թողնվել են անհետևանք:

Հարգանքով՝

Պետ,
ոստիկանության գնդապետ՝ *Վ.Մարտիրոսյան*

կատ.Ա.Շահինյան
հեռ.010-59-63-36

Հավելված 3. ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պատասխանն առ հոկտեմբերի 23, 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Մայիսյան 46/5 հեռ. 011-880 025, 099-47 07-05

23-ը հոկտեմբերի, 2024թ. N 4-503/գ-24

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ

Ա.Սաքունցին

Ի պատասխան Ձեր՝ 22.10.2024թ. թիվ Ա/2024-22.10/1109 գրության՝

Հայտնում եմ Ձեզ, որ 2024 թվականի հունիսի 14-ին ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով նախաձեռնվել է թիվ 69117224 քրեական վարույթը՝ 2024 թվականի հունիսի 12-ին Երևանի Բաղրամյան պողոտայի և Դեմիրճյան փողոցի խաչմերուկում տեղի ունեցած բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանության ծառայողների կողմից ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների, այդ թվում՝ լուսաձայնային նռնակների գործադրման դեպքի առթիվ:

Նախաքննության ներկա փուլում որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել:

Նախաքննությունը շարունակվում է:

Հարգանքով՝

Խոշտանգումներին և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչության պետի մ/պ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝

Ա.Սուքիասյան

Հավելված 4. ՀՀ գլխավոր դատախազության պատասխանն առ հոկտեմբերի 28, 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող. 5
էլ. փոստ: info@prosecutor.am

28.10.24
36-456-24

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» հասարակական
կազմակերպության նախագահ
Ա. Սաքունցին
ք. Վանաձոր, Ցիգան Ենոքի պողոտա 53:

Ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազին
հասցեագրված Ձեր՝ 22.10.2024թ. գրությանը

Հարգելի՛ պարոն Սաքունց,

2024 թվականի հունիսի 12-ին Երևան քաղաքի Ալաշկերտի պողոտայում տեղի ունեցած բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանության ծառայողների կողմից գործադրված ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների, այդ թվում՝ լուսաձայնային նռնակների գործադրման արդյունքում բազմաթիվ քաղաքացիների մարմնական վնասվածքներ պատճառելու դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության խուզարկումների և դատաբժշկական անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անգործության հանցագործությունների քննության շրջանակում ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2 րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում իրականացվել են մի շարք ապացուցողական և վարութային այլ գործողություններ:

Ներկայումս էլ դատախազական հետադիմանության, պատշաճ հսկողության ներքո շարունակվում են իրականացվել անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ համակողմանի և սնանկ նախաքննություն ապահովելու ուղղությամբ:

Նախաքննությունը դեռևս շարունակվում է, Ներկա փուլում հիշյալ քրեական վարույթով որպես մեղադրյալ ներգրավված անձինք չկան:

Հարգանքով՝
պետական իշխանության դեմ ուղղված
հանցագործությունների գործերով
վարչության պետի տեղակալ՝

Ա. Նշանյան